Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն՝**
   Եղիշե Կիրակոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք, 2023թ. դեկտեմբերի 7-8-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Կիրառելի չէ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**
   Գործուղման նպատակն էր մասնակցել ս.թ. դեկտեմբերի 4-ից 14-ը Նյու Յորքում գտնվող ՄԱԿ-ի գլխամասում կայանալիք Միջազգային քրեական դատարանի մասնակից պետությունների 22-րդ վեհաժողովի աշխատանքներին, ինչպես նաև զուգահեռ կայանալիք «The Universality of the International Criminal Court: On the importance of ratifying the Rome Statute and the Agreement on the Privileges and Immunities of the ICC» խորագրով կլոր-սեղան քննարկմանը:

6. **Քննարկված թեմաները՝**
   Հռոմի ստատուտի վավերացում, Միջազգային քրեական դատարանի արտոնությունների և անձեռնմխելիության վերաբերյալ համաձայնագիր

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
   Ս.թ. դեկտեմբերի 7-ին Նյու Յորքում տեղի ունեցած Միջազգային քրեական դատարանի մասնակից պետությունների 22-րդ վեհաժողովի աշխատանքների շրջանակներում Հայաստանի Հանրապետության անունից հանդես եմ եկել առանձին ելույթով՝ Հռոմի ստատուտի վավերացման կարևորության առնչությամբ, որից հետո մասնակցել եմ ս.թ. դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած «The Universality of the International Criminal Court: On the importance of ratifying the Rome Statute and the Agreement on the Privileges and Immunities of the ICC» խորագրով կլոր սեղան քննարկմանը, որին մասնակցում էին նաև Միջազգային քրեական դատարանի նախագահը և մասնակից պետությունների վեհաժողովի նախագահը: Քննարկման կազմակերպիչներն էին Նիդերլանդների Թագավորությունը և Կորեայի Հանրապետությունը՝ «Parliamentarians for Global Action» կառույցի հետ համատեղ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Կիրառելի չէ

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**.

Կիրառելի չէ

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**.

19 դեկտեմբերի 2023թ.